նորին. և դարձեալ սորին վասն գորովեալ փղձկիմք 'ի տեսիլ գերեզմանին, ուր հանգչի նորահարսն, սէր և ակնկալութիւն ընտանեացն իւրովք առաքինութեամբք։ Առ 'ի մեծարոյ ընծայեցուցանելոյ զայնպիսի շիրիմ՝ ոչ կճեայց ինչ պէտք են, ոչ պղնձեայց և ոչ ոսկի դրուագաց. այլ որչափ անպաճոյճք իցեն՝ այնչափ խորագոյնս ներգործեն զթախծութիւն։ Ազդողագոյնք ևս են անշուք պարզութեամբն քան ճոխութեամբ, հնութեամբն քան նորութեամբ, թշուառութեանն յայտարար հանգամանօք, քան պատուադիր անուամբք. առաքինութեանցն յորջորջանօք քան զօրութեանն։

Ի բացօթեայ և յանշէն վայրս մանաւանդ խորագոյն է ազդեցութիւն նոցին. բազում այն է զի գերեզման մի անպաճոյճ՝ յորդագոյն տայ հեղուլ արտասուս քան զբարձրագահ դագաղսն 'ի մայր եկեղեցիս. անդ ցաւն առնու վսեմ իմն կերպարանս և բարձրացեալ ընդ հինաւուրց գեղձս գերեզմանաց, ձգի ընդլայնի իբրև զբացարձակ դաշտս և զլերինս շուրջանակի, և դաշնաւորեալ զուգաձայնի ամենայն երևութից բնութեան, ծագման առաւօտուն, մռնչելոյ հողմոց, մտից արևուն, և խաւարչուտ գիշերոյ։ Վաստակք յոգնատաժանք և վիճակ նուաստութեան ոչ կարեն շիջուցանել զազդեցութիւն նորին 'ի սիրտըս հէքացելոց։

ՊԷՌՆԱՐՏԷՆ ՏԸ–ՍԷՆ–ԲԻԷՐ

Թարգմանեաց Ն.. Աշլահվերտի

Կոյր մեքենագործ մը.

Ամենևին բան մը չիկրնար զմեզ այնպէս զարմացնել, ինչպէս բնութեան այն գաղտնիքը, որ եթէ մէկի մը հարկաւոր եղած ձիրքը զլացեր է տալու, բայց միւս կողմանէ ուրիշ կատարելութեամբ մը նոյն պակասը լեցուցեր է։ Ասոր նման են խուլերը, որոնք թէպէտ բոլորովին զուրկ են լսողութեան գաղափարէն, բայց իրենց տեսութեան գործարանը ուրիշներէն շատ աւելի գերազանց է. նոյնպէս նաև կոյրերուն շօշափականը կարգէ դուրս զգայուն և փափուկ է։

Ահաւասիկ սքանչելի օրինակ մը ըսածներնուս։

Պարոն Գիտ, որ նաւավարի մը որդի էր, ծնաւ Սկովտիոյ Կրէնոք ծովեզերեայ քաղաքը։ Չորս տարուան եղած ժամանակը ծաղկի հիւանդութիւն քաշելով՝ դժբաղդութեամբ երկու աչքն ալ կորսնցուց։ Ասանկով թէպէտ և բոլորովին կուրցաւ, բայց պզտիկուց 'ի վեր մեքենական արուեստից մեծ յարմարութիւն և սէր կը ցուցընէր։

Իբրև մեծ դանակ մը՝ փայտի մը կըտոր ճարեց իրեն, որուն պարզ կտրուցով մը միայն՝ ուզած ձևը կու տար. բայց իրեն մեծ փորձութիւնը ան էր՝ որ ան փայտէն նաւ մը շինէ՝ զոր թերևս իր քաղքին յարմար դիրքը, և կամ հօրը նոյն տեսակ բանի վերաբերեալ արուեստը՝ ազդած ըլլայ իրեն։ Իր կենաց մեծագոյն մասը այս տեսակ զբաղմամբ կ'անցընէր՝ որոնց բնական յարմարութիւն մը ունենալով, իր մխիթարութիւնը անոնցմով միայն կը գտնար։

Բայց վերջերը՝ մասնաւորապէս երբոր այս միտքը դրած նաւը շինել սկըսաւ, կտրոցէն զատ նաև սղոց և քերիչ սկսաւ գործածել, ան աստիճանի վարժութեամբ որ տեսնողները կը հիացընէր։

Այս իրեն ձեռք զարկած նաւը՝ գրեթէ եօթը տարուան մէջ շինեց լմնցուց, որ վաթսուն և չորս թնդանօթով պատերազմական նաւու մը ճիշդ պզտի օրինակն էր, որուն բարձրութիւնը չորս ոտք, և ամբողջ երկայնութիւնը վեց ոտք է։ Նաւուն կամարակապ ծածքերը տախտակէ են, ինչպէս ամեն սովորական նաւերունը. մէջի թնդանօթները և անոնց համար շինուած պատուհանները ամենայն ճշդութեամբ շինուած.

իսկ թնդանօթներուն երկայնութիւնը իրենց լայնութեանը համեմատ են, և որ զարմանալին է՝ նաւուն ընդհանուր շէնքը, նաւական ճարտարապետութեան կանոնէն՝ և ոչ գծիւ չափ կը վրիպի։ Նաւակ մը և երեք պզտի մակոյկ միացած են նաւուն հետ որոց առաջինը այլ և այլ կտորներէ շինուած է, իսկ մէկալնոնք՝ միակտուր փայտէ. որոց ամենքն ալ ունին իրենց նստարանները թի քաշողներուն համար։

Նոր Մամմութ մը.

Պարոն Պէհր՝ Բետըրսպուրկի կայսերական ճեմարանին գիտութեանց մասին պատուոյ կաճառորդը, վերջի փետրուար ամսուն մէջ թուղթ մը հաղորդեր էր նոյն ճեմարանին, զոր ընդունած էր 'ի Դոմսք նահանգէն (արևմըտեան Սիպերիա). այս թղթին մէջ կը ծանուցանէր նոր մամմութի մը գտուած ըլլալը Դացովսքայա անուն ճախճախուտին մէջ։

Տեղացի մը իրեն կորսուած վիթերը[1] բնտռելու ելած ըլլալով, յանկարծ ճախճախուտ դաշտին մէջ մեծ եղջիւր մը կը տեսնէ գետնէն 'ի վեր բուսած. խլել ուզելով զայն արմատաքի, կ'իմանայ որ վիթխարի կենդանւոյ մը գըլխուն մէկ մասն է. կը կտրէ վերջապէս իրեն եղջիւր կարծած մասը, որ իրապէս կենդանւոյ վրիժակն[2] էր, հետն ալ կտոր մը գլխոյն մորթէն կը փրցունէ։

Մորթը մէկ ու կէս մատ թանձրութիւն ունէր և երկու բուտ և կէս շիկագոյն մազով ծածկած։ Մարդը այս իրեն, տեսածը իմացուց նաև ուրիշներուն մինչև բանը Պր. Կուլիայեվին ականջը հասաւ։ Պր. Կուլիայեվ թղթին մէջ իր ականատեսութիւնը կը յայտնէ, որ ճեմարանը անփոյթ չըլլար անշուշտ իւր թանգարանը այսպիսի մամմութով մը ճոխացնելու։

Տարակոյս չկայ այս գիւտոյն մեծապէս շահաւէտ ըլլալը և ամենակարևոր գիտութեան. վասն զի երկար ժամանակէ 'ի վեր կարևորութիւն կար մամմութի կակուղ մասերուն վրայ ալ քննութիւն ընելու և մինչև հիմա գըտնուած չէր։ Ուստի ճեմարանը մասնաւոր գիտնոց յանձնեց, որ են ՊՊ. Պէհր, Պրանտ, Հէլմէսսէն և Շէնք, որ կարևոր միջոցները 'ի գործ դնեն և այդ մամմութին ոսկրոտիքը գետնէն հանելով Բետըրսպուրկ հասցունել տան կայսերական թանգարանին մէջ դնելու։

1 Տաճկ. Եապան քէչիսի։

2 Վըրիժակ՝ կ'ըսուին փղի, վարազի և նման կենդանեաց ակռաները, որ բերներնէն դուրս ցցուած են սոսկ իրենց կենաց պահպանութեանը համար։

ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆՑ

ԱՌՋԵՒԸ ԱՌՆԵԼՈՒ ԿԵՐՊ

ԳԼՈՒԽ ԺԹ

Ծծմբային, աղային տաք ջրեր, շեղի և հոտաւէտ ջրեր, բուսական և հանքային բըբուռտներ:

Ռէյների, Արքուայի, սուրբ Դանիէլի, Ապանոյի, ու ասոնց պէս հանքային ջրերը խիստ օգտակար են մորթային հիւանդութիւններու, խմելով կամ լուացուելով։ Ասոնցմով լուացուելով՝ մորթային եռը, որքիւնը, գոնջութիւնը, բորոտութիւնը կ'ըռընտնան. արևան առատութեան ու բորբոքմանց դէմ ալ կը զօրեն ասոնք. ստամոքսի ալ, քանի մը թոքային հիւանդութեանց ալ օգուտ կ'ընեն։ Բայց Եւգանեան բլուրներուն վրայ բուն իրենց տեղը խմելով աս ջուրերը՝ աւելի օգտակար են, ան տեղի առողջ, բարեխառն ու քաղցր օդին ու ծծմբային գոլորշեացը համար։

Փափուկ խառնուած ունեցող անձանց, որ չեն կրնար մարսել աս ջրերը, պէտք է կերակրի ատեն քիչ մը գինի հետը խառնելով տալ. ան ատենը նեղութիւն չեն տար, և մեծ օգուտ կ'ընեն հիւանդին։ Սամիթի, անանուխի, կիտրոնի, նարընջի